Ի՞նչ նշանակություն ունեն Տարեցների խնամքի որակի ապահովման նոր չափորոշիչները մատակարարների համար



Չափորոշիչ 1

Կազմակերպությունն ունի՝
(a) սպառողների հանդեպ հարգանքի և ներառության մշակույթ. և
(b) աջակցում է սպառողներին իրենց ընտրություններն և անկախությունը կիրառելու հարցում. և
(c) հարգում է սպառողների գաղտնիությունը:

Չափորոշիչ 2

Կազմակերպությունը նախաձեռնում է խնամքի և ծառայությունների նախնական և ընթացիկ գնահատում և պլանավորում՝սպառողի մասնակցությամբ: Գնահատման և պլանավորման կենտրոնում են առողջության և բարեկեցության բարելավումը՝ սպառողի կարիքներին, նպատակներին և նախասիրություններին համապատասխան:

Չափորոշիչ 3

Կազմակերպությունը ապահով և արդյունավետ անձնական խնամք, կլինիկակակն խնամք, կամ միաժամանակ և՛ անձնական, և՛ կլինիկական խնամք է տրամադրում, սպառողի կարիքներին, նպատակներին և նախասիրություններին համապատասխան:

Չափորոշիչ 4

Կազմակերպությունը ապահով և արդյունավետ ծառայություններ և աջակցություն է տրամադրում առօրյա կյանքի համար, որոնք բարելավում են սպառողի անկախությունը, բարեկեցությունը և կյանքի որակը:

Չափորոշիչ 5

Կազմակերպությունը ապահով և հարմարավետ սպասարկման միջավայր է ստեղծում, որը նպաստում է սպառողի անկախությանը, գործողություններին և հաճույքին:

Չափորոշիչ 6

Կազմակերպությունը կանոնավոր կերպով կարծիքներ ու բողոքներ է հավաքում սպառողներից, խնամողներից, աշխատակազմից և այլոց կողմից՝ շարունակական որակի բարձրացում ապահովելով առանձին սպառողների և ամբողջ կազմակերպության համար:

Չափորոշիչ 7

Կազմակերպությունն ունի աշխատակազմ, որը բավականաչափ է, հմուտ է և պատրաստված է տրամադրելու ապահով, հարգալից և որակյալ խնամք ու ծառայություններ:

Չափորոշիչ 8

Կազմակերպության կառավարող մարմինը հաշվետու է ապահով և որակյալ խնամք ու ծառայություններ տարամադրելու հարցում:

Տեղեկություններ տարեցների խնամքի ծառայությունների մատակարարների համար

2019թ. հուլիսի 1-ի, Aged Care Quality and Safety Commission (Տարեցների խնամքի որակի և ապահովության հանձնաժողովը) ակնկալում է, որ Ավստրալիայում տարեցների խնամք մատակարարող կազմակերպությունները պետք է համապատասխանեն Տարեցների խնամքի որակի ապահովման չափորոշիչներին: Չափորոշիները կենտրոնանում են սպառողների համար արդյունքների վրա և արտացոլում են խնամքի և ծառայությունների այն մակարդակը, որ ակնկալվում է համայնքի կողմից: Որոշ Չափորոշիչներ տարբեր կիրառում կունենան կամակերպությունների վրա, կապված իրենց կողմից տրամադրվող խնամքի ու ծառայությունների տեսակից:

Գոյություն ունեն ութ Չափորոշիչներ, և յուրաքանչյուրը պարունակում է սպառողական արդյունք, կամակերպության սահմանում և մի շարք պահանջներ, որոնք ուրվագծում են, թե ինչ պետք է ցուցադրեք, որպեսզի ապացուցեք, որ տվյալ Չափորոշիչն ապահովված է:

Australian Government
Aged Care Quality and Safety Commission

Եթե լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք

Ուղղորդող նյութերը նախագծվել են օգնելու համար կազմակերպություններին և աշխատակազմերին հասկանալ Որակի ապահովման չափորոշիչները և թե ինչ է ակնկալվելու որակի գնահատման ժամանակ. անդրադառնալու համար առօրյա գործառույթներին և բարելավում պահանջող ոլորտներին. և Որակի ապահովման չափորոշիչներին համապատասխանելու շարունակական կատարողականի վերանայումներ իրականացնելու համար:

Սույն նյութերը նկարագրում են Aged Care Quality and Safety Commission-ի (Տարեցների խնամքի որակի և ապահովության հանձնաժողովի) ակնկալիքները և տրամադրում են օժանդակ տեղեկություններ, առաջարկվող գործելակերպեր, ինչպես նաև գործողությունների օրինակներ և վկայություններ՝ չափորոշիչներին համապատասխանությունը ցուցադրելու համար:

Ուղղորդող նյութերը կարող եք գտնել Commission-ի կայքում՝
agedcarequality.gov.au/providers/standards
հասցեով:

Engage
Empower
Safeguard

Ի՞նչ նշանակություն ունեն ձեր համար Տարեցների խնամքի որակի ապահովման նոր չափորոշիչները



Չափորոշիչ 1

Ես արժանանում եմ հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի և ի վիճակի եմ պահպանել իմ ինքնությունը: Ես կարողանում եմ գիտակցված ընտրություններ կատարել իմ խնամքի և ծառայությունների վերաբերյալ և իմ ընտրած կյանքով ապրել:

Չափորոշիչ 2

Ես մասնակից եմ ընթացիկ գնահատումներին և պլանավորմանը, ինչն օգնում է ինձ ստանալ իմ առողջության և բարեկեցության համար անհրաժեշտ խնամքն ու ծառայությունները:

Չափորոշիչ 3

Ես ստանում եմ անձնական խնամք, կլինիկական խնամք, կամ միաժամանակ և՛ անձնական, և՛ կլինիկական խնամք, որ ապահով է և ճիշտ է ինձ համար:

Չափորոշիչ 4

Ես ստանում եմ առօրյա կյանքի ծառայություններ և աջակցություն, որ կարևոր են իմ առողջության և բարեկեցության համար և հնարավորություն են ընձեռում ինձ զբաղվել իմ ուզած գործերով:

Չափորոշիչ 5

Ես ինձ ապահով ու հարմարավետ եմ զգում կազմակերպության սպասարկման միջավայրում, և զգում եմ, որ պատկանում եմ այստեղ:

Չափորոշիչ 6

Ես ինձ ապահով եմ զգում, և իմ կարծիքներն ու բողոքները խրախուսվում և աջակցություն են ստանում: Ես ներգրավվում եմ իմ կարծիքներն ու բողոքները հայտնելու գործընթացների մեջ, և դրանց համապատասխան ընթացք է տրվում:

Չափորոշիչ 7

Ես որակյալ խնամք ու ծառայություններ եմ ստանում, երբ զգում եմ դրանց անհրաժեշտությունը, գիտակ, ունակ և հոգատար մարդկանցից:

Չափորոշիչ 8

Ես վստահ եմ, որ կազմակերպությունը լավ է կառավարվում: Ես կարող եմ մասնակից լինել խնամքի և ծառայությունների մատակարարման բարելավմանը:

Տեղեկություններ տարեցների խնամքի ծառայությունների սպառողների, իրենց ընտանիքների, խնամողների և ներկայացուցիչների համար

2019թ. հուլիսի 1-ից ձեր ծառայությունը պարտավոր է ցուցադրել, որ այն համապատասխանում է Տարեցների խնամքի որակի ապահովման չափորոշիչներին: Որակի ապահովման չափորոշիչները հստակ կերպով սահմանում են, թե ինչպիսին պետք է լինի որակյալ խնամքը, և բոլորը պետք է նմանատիպ խնամք ստանան: Գոյություն ունեն ութ Չափորոշիչներ, և դրանցից յուրաքանչյուրը վերաբերում է խնամքի որոշակի կողմի, որը նպաստում է ձեր ապահովությանը, առողջությանը և բարեկեցությանը: Գոյություն ունի նաև Տարեցների խնամքի իրավունքների կանոնադրություն:

Յուրաքանչյուր Չափորոշիչ ներկայացնում է, թե ինչ կարող եք դուք, որպես սպառող, ակնկալել: Տարեցների խնամքի ձեր մատակարարը պետք է ցուցադրի , թե ինչպես են իրենք ապահովում այդ արդյունքը:

Australian Government
Aged Care Quality and Safety Commission

Եթե մտահոգություններ ունեք

Դուք և ձեր ընտանիքը պետք է հարմար զգաք բարձրաձայնելով ձեր ունեցած հարցերն ու մտահոգությունները, երբ զգաք, որ խնամքը չի համապատասխանում Չափորոշիչներին:

1. Եթե կարող եք, նախ խոսեք ձեր մատակարարի հետ՝ ձեր խնդիրները լուծելու համար:
2. Ծառայությունների մասին բողոք կամ կարծիք ներկայացնելու համար, զնագահարեք մեզ՝ **1800 951 822** հեռախոսահամարով:
3. Դուք կարող եք նաև դիմել փաստաբանների օգնությանը: Զանգահարեք National Aged Care Advocacy Line (Տարեցների խնամքի փաստաբանական գիծ) **1800 700 600** հեռախոսահամարով:

Եթե լսողության կամ խոսքի դժվարություն ունեք, կարող եք զնագահարել National Relay Service (Ազգային հաղորդակցության ծառայություն)՝ **1800 555 677** հեռախոսահամարով:

Գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունները գործում են **131 450** հեռախոսահամարով:

Չափորոշիչների իմաստն է՝ համատեղ աշխատելով հասնել նրան, որ յուրաքանչյուր ոք որակյալ խնամք ստանա: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Commision-ի կայքում.
agedcarequality.gov.au/consumers/standards/resources

Engage
Empower
Safeguard